

Հաստատված է
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
 ամբիոնի << 31 >> << 08>> 2018. նիստում (արձ. քի
 թիվ 1)
 Ամբիոնի պետ _____ Մ. Մուրադյան
 2018թ.

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	«ՀՀ աշխատանքային և սոցիալական ապահովության իրավունք»
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ	
ՖԱԿՈՒՆԵՏ	Իրավագիտություն, առկա անվճար ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ	Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոն
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Ա. Տոնոյան E-mail: anjela.tonoyan@mail.ru 094695710
ՈՒՄ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ	2-ին կուրս, 2-րդ կիսամյակ

ԿՐԵԴԻՏՆԵՐ	3 (երեք)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ	«ՀՀ աշխատանքային իրավունք» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 36 դասախոսություն, 18 սեմինար, 36 ժամ ինքնուրույն աշխատանք;
ՆԱԽԱԴԱՅՄԱՆ	Դասընթացը կառուցվում է. Սահմանադրական իրավունք, քաղաքացիական իրավունք, Մարդու իրավունքների հիմունքներ առարկաների նյութերի իմացություն, ՀՀ Սահմանադրության իմացություն:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ	«ՀՀ աշխատանքային իրավունք» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են՝ աշխատանքային իրավունքի առարկան, աշխատանքային իրավունքի աղբյուրները, աշխատանքային իրավունքի սկզբունքները, աշխատանքային իրավա-հարաբերություններ հասկացությունը և սուբյեկտները, ժամկետային աշխատանքի հասկացությունը, ժամկետը աշխատանքային իրավահարաբերություններում, աշխատանքային իրավունքների իրականացումը և պաշտպանությունը, աշխատանքային պայմանագիր. հասկացությունը և տեսակները, կոլեկտիվ պայմանագիր, աշխատանքային պայմանագրի կնքում և լուծում:

<p>ՆՊԱՏԱԿ</p> <p>ԽՆԴԻՐ/ՆԵՐ</p>	<p>Դասընթացի նպատակն է ուսանողներին մատուցել համապարփակ գիտելիքներ՝</p> <ol style="list-style-type: none"> 1. ՀՀ աշխատանքային իրավունքի էության և բովանդակության, 2. ՀՀ աշխատանքային իրավունքի հիմնական հասկացությունների և օերնքների, 3. Հիմնախնդիրների 4. Աշխատանքային պայմանագրերի վերաբերյալ: <ul style="list-style-type: none"> • պարզաբանել ՀՀ օրենսդրության կարգավորումները աշխատանքային հարաբերությունների շրջանակներում, • պարզաբանել աշխատանքային օրենսդրության համակարգը, • սովորեցնել վերլուծել աշխատանքային իրավահարաբերությունների դիտող, ինչպես նաև նրա հետ առնչվող դրոյթները, • սովորեցնել ուսանողների մոտ գործնական մոտեցումների ի հայտ գալը՝ տվյալ առարկայի շրջանակներում քննարկվող խնդիրները լուծելիս, • սովորեցնել ուսանողներին յուրաքանչյուր իրավական խնդիրն որակում տալը, • սովորեցնել օգտվել գիտական ու որոնողական-տեղեկատվական մասնագիտական ինտերնետային աղբյուրներից:
<p>ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</p> <p>1. Կարողնա՝</p>	<ol style="list-style-type: none"> 1. վերարտադրել ՀՀ օրենսդրության կարգավորումները աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ ու դրանք կիրառել պրակտիկ աշխատանքում, 2. բացահայտել աշխատանքային հարաբերությունների իրավական կարգավորման մակարդակն ու որակը, և տալ դրանց իրավական գնահատականը, 3. վեր հանել աշխատանքային իրավունքի խնդրահարույց տեսական դրոյթները, վերլուծել դրանք և դրանց հիման վրա զարգացնել սեփական դատողությունները, 4. ընտանեկան իրավունքի և օրենսդրության վերաբերյալ ձեռք բերված գիտելիքները կիրառել պրակտիկայում, 5. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ,) 6. վերլուծել փաստերն ու կատարել հետևություններ, ստեղծագործաբար կիրառել ու զարգացնել ունեցած գիտելիքները:

<p>ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</p>	
-----------------------------	--

Հիմնական	<p>ՀՀ Սահմանադրություն</p> <ul style="list-style-type: none"> • ՀՀ աշխատանքային օրենսգիրք • ՀՀ քաղաքացիական օրենսգիրք • Չբաղվածության մասին՝ ՀՀ օրենքը • Նվազագույն ամսական աշխատավարձի մասին ՀՀ օրենքը • Մարդու իրավունքների համընդհանուր չոչափազիտ (1948) • Արհեստակցական միությունների մասին ՀՀ օրենքը • Խրոպանյուկ Վ.Ն.: Պետության և իրավունքի տեսություն, Երևան, ԳՈՇ, 1997, • ՀՀ աշխատանքային իրավունք: Ընդհանուր մաս / Երևանի պետ. հասար. Եր. ԵՊՀ. հրատ., 2009 - 336 էջ Գ. Վ.Պետրոսյան
Լրացուցիչ	<ol style="list-style-type: none"> 1. 1. Гусов К.Н., Толкунова В.Н. Трудовое право России Учебник. - М.: «Юрист». 1997, 2. 2. Тихомиров М.Ю. Трудовые споры (контракты). Образцы документов, комментариев, нормативные акты. -М., 1999, 3. 3. Толкунова В.Н. Трудовые споры и порядок их разрешения - М., «Юрист», 1993, 4. 4. Советское трудовое право. Под ред. А.И. Процевского. Изд объединение «Вища Школа». Киев, 1981, 5. 5. Трудовое право России. Учебник. Под ред. А.С. Пашкова. СПб., 1994, 6. Киселев И.Я. Зарубежное трудовое право. Учебник для вузов.-М. «НОРМА-ИНФРА-М», 1998 7. Желтов О.Б. Трудовое Право: учебник.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	Ստուգարք (ստուգված, չստուգված)

<p>ԳԼԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՉՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ</p>	<p>Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:</p> <p>Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝</p> <p>ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով:</p> <p>բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների:</p> <p>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները:</p> <p>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:</p>
<p>ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>	
<p>Ներկայություն</p> <p>Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ</p> <p>Ինքնուրույն և գործնական աշխատանքներ</p>	<p>Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:</p> <p>Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:</p> <p>Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:</p> <p>Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում:</p> <p>Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:</p>

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՂՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունքի ճյուղի ընդհանուր բնութագիրը (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցերը	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Աշխատանքային իրավունքի հասկացությունը 2. Աշխատանքային իրավունքի կարգավորման առարկան 3. Աշխատանքային իրավունքի մեթոդը 3. Աշխատանքային իրավունքի համակարգը	Հարցեր 1-4 - ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-4 - անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են աշխատանքային իրավունքի ընդհանուր բնութագիրը:

--	--

Թեմա 2 Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունքի աղբյուրները (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Աշխատանքային իրավունքի աղբյուրի հասկացությունը 2. Աշխատանքային իրավունքի աղբյուրների դասակարգումը 3. ՀՀ Սահմանադրությունը որպես աշխատանքային իրավունքի աղբյուր 4. Միջազգային իրավական ակտերը որպես աշխատանքային իրավունքի աղբյուր 5. ՀՀ աշխատանքային օրենսգիրքը որպես աշխատանքային իրավունքի աղբյուր 6. Այլ նորմատիվ իրավական ակտերը որպես աշխատանքային իրավունքի աղբյուր	Հարցեր 1-6 - ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-6 - անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են աշխատանքային իրավունքի աղբյուրների ընդհանուր բնութագիրը և միջազգային իրավական ակտերը:

Թեմա 3 Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունքի սկզբունքները (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Աշխատանքային իրավունքի սկզբունքների բնութագիրը 2. Ընդհանուր-իրավական սկզբունքներն աշխատանքային հարաբերությունների ոլորտում 3. Միջճյուղային-իրավական և ճյուղային սկզբունքները աշխատանքային հարաբերությունների ոլորտում	Հարցեր 1-3 - ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 - անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են աշխատանքային իրավունքի սկզբունքները:

Թեմա 4 Աշխատանքային իրավահարաբերություններ (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Աշխատանքային իրավահարաբերությունների հասկացությունը, կառուցվածքը և առանձնահատկությունները 2. Աշխատանքային իրավահարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը 3. Աշխատանքային իրավահարաբերությունների դասակարգումը	Հարցեր 1-3 - ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 - անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են աշխատանքային իրավահարաբերությունների կառուցվածքը:

Թեմա 5 Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունքի սուբյեկտները (2 ժամ դասախոսություն)

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Աշխատանքային իրավունքի սուբյեկտի հասկացությունը և դասակարգումը</p> <p>2. Աշխատողը որպես աշխատանքային իրավունքի սուբյեկտ</p> <p>3. Գործատուն որպես աշխատանքային իրավունքի սուբյեկտ</p> <p>4. Աշխատողների և գործատուների ներկայացուցչական մարմինները որպես աշխատանքային իրավունքի սուբյեկտ</p> <p>5. Պետությունը որպես աշխատանքային իրավունքի սուբյեկտ</p>	<p>Հարցեր 1-5 - ներկայացվում է դասախոսություն, որի ընթացքում սովորողներին ներկայացվում է աշխատանքային իրավունքի սուբյեկտների հասկացությունը և նրանց դերը և կատարվում է դրանց խմբային քննարկում: Սովորողներն ուսումնասիրում են թեմային առնչվող գրականությունը:</p>

<p align="center">Թեմա 6 Ժամկետները աշխատանքային իրավունքում (2 ժամ դասախոսություն)</p>	
Թեմայի հարցերը	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Ժամկետների հասկացությունը և տեսակները</p> <p>2. Ժամկետների հաշվառելու կարգը</p> <p>3. Հայցային վաղեմության, մարման և դատավարական ժամկետները</p>	<p>Հարցեր 1-3- ներկայացվում է դասախոսություն: Սովորողներն ուսումնասիրում են թեմային առնչվող գրականությունը:</p>

<p align="center">Թեմա 7 Աշխատանքային իրավունքի իրականացումը և պաշտպանությունը (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)</p>	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Աշխատանքային իրավունքի իրականացումը</p> <p>2. Աշխատանքային պաշտպանությունը</p>	<p>Հարցեր 1-2- ներկայացվում է դասախոսություն: Սովորողներն ուսումնասիրում են թեմային առնչվող գրականությունը:</p>

<p align="center">Թեմա 8 Աշխատանքային պայմանագիր (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)</p>	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Աշխատանքային պայմանագրի բովանդակությունը և պայմանագրի կնքումը</p> <p>2. Աշխատանքային պայմանագրի տեսակները</p>	<p>Հարցեր 1-2 - ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 - անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են աշխատանքային պայմանագրի հասկացությունը և նշանակությունը, կատարվում է դրանց խմբային քննարկում: Սովորողներն ուսումնասիրում են թեմային առնչվող գրականությունը:</p>

Թեմա 9 Աշխատաժամանակ և հանգստի ժամանակ (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Աշխատաժամանակի հասկացությունը և տեսակները 2. Հանգստի ժամանակի և տեսակները 3. Աշխատաժամանակի տևողությունը	Հարցեր 1-3 - ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 - անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են աշխատաժամանակը ՀՀ-ում, հանգստի ժամանակը, տրման կարգը և այլն, կատարվում է խմբային քննարկում: Սովորողներն ուսումնասիրում են թեմային առնչվող գրականությունը:

Թեմա 10 Կոլեկտիվ պայմանագիր (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Կոլեկտիվ պայմանագիր 2. Կոլեկտիվ պայմանագրի մակարդակները	Հարցեր 1-2 - ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 - անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են կոլեկտիվ պայմանագրի էությունը, անցկացման կարգը և այլն, կատարվում է խմբային քննարկում: Սովորողներն ուսումնասիրում են թեմային առնչվող գրականությունը:

Թեմա 11 Աշխատանքի վարձատրություն (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Աշխատավարձի չափը որոշելը և փոփոխելը 2. Աշխատավարձի վճարման կարգը և ժամկետները, չվճարված կամ ժամկետանց վճարման համար պատասխանատվությունը	Հարցեր 1-2 - ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 - անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են աշխատավարձի տրման կարգը, «Նվազագույն աշխատավարձի մասին» օրենքը, միջին աշխատավարձի հաշվարկման կարգը և այլն: Սովորողներն ուսումնասիրում են թեմային առնչվող գրականությունը: Սեմինար պարապմունքի

	ժամանակ քննարկվում են ինդրահարույց հարցերը:
--	---

Թեմա 12 Աշխատանքային կարգապահություն (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Աշխատանքի կարգապահության հասկացությունը, բովանդակությունը և ամրապնդման մեթոդները: 2. Ճառայողների իրավունքները և պարտականությունները 3. Կարգապահական զանցանքները և դրանց տեսակները 4. Կարգապահական ներգործության միջոցները 5. Ներքին կարգուկանոնի հասկացությունը	Հարցեր 1-5 - ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-5 - անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են աշխատանքային կարգապահությունը, կազմակերպության ներքին կարգապահական կանոնները (ինքնուրույն աշխատանք), տույժի և խրախուսանքի տեսակները, տրման կարգը և այլն: Սովորողներն ուսումնասիրում են թեմային առնչվող գրականությունը: Սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են ինդրահարույց հարցերը:

Թեմա 13 Աշխատողների անվտանգությունը և առողջությունը (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Թեմայի հարցեր
1. Աշխատանքային անվտանգության և առողջության ապահովման երաշխիքները	Հարցեր 1- ներկայացվում է դասախոսություն, որի ընթացքում սովորողներին ներկայացվում է առողջության երաշխիքները աշխատանքի վայրում և անվտանգության ապահովման կանոնները: Սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են ինդրահարույց հարցերը:

Թեմա 16 Կոլեկտիվ աշխատանքային վեճերի կարգավորումը և դրանց քննարկման կարգը: Աշխատանքային վեճեր (4 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Թեմայի հարցեր
1..Կոլեկտիվ աշխատանքային վեճեր 2.Աշխատանքային վեճեր	Հարցեր 1-2- ներկայացվում է դասախոսություն: որի ընթացքում սովորողներին ներկայացվում է կոլեկտիվ և անհատական աշխատանքային վեճերի քննարկման կարգ: :

Հարցաշար
 «ՀՀ աշխատանքային իրավունք»
 առարկայի ստուգարքի

1. Աշխատանքային իրավունքի հասկացությունը
2. Աշխատանքային իրավունքի կարգավորման առարկան
3. Աշխատանքային իրավունքի մեթոդը
4. Աշխատանքային իրավունքի համակարգը
5. Աշխատանքային իրավունքի աղբյուրի հասկացությունը
6. Աշխատանքային իրավունքի աղբյուրների դասակարգումը
7. ՀՀ Սահմանադրությունը որպես աշխատանքային իրավունքի աղբյուր
8. Միջազգային իրավական ակտերը որպես աշխատանքային իրավունքի աղբյուր

9. ՀՀ աշխատանքային օրենսգիրքը որպես աշխատանքային իրավունքի աղբյուր
10. Այլ նորմատիվ իրավական ակտերը որպես աշխատանքային իրավունքի աղբյուր
11. Աշխատանքային իրավունքի սկզբունքների բնութագիրը
12. Ընդհանուր - իրավական սկզբունքներն աշխատանքային հարաբերությունների ոլորտում
13. Միջճյուղային - իրավական և ճյուղային սկզբունքները աշխատանքային հարաբերությունների ոլորտում
14. Աշխատանքային իրավահարաբերությունների հասկացությունը, կառուցվածքը և առանձնահատկությունները
15. Աշխատանքային իրավահարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը
16. Աշխատանքային իրավահարաբերությունների դասակարգումը
17. Աշխատանքային իրավունքի սուբյեկտի հասկացությունը և դասակարգումը
18. Աշխատողը որպես աշխատանքային իրավունքի սուբյեկտ
19. Գործատուն որպես աշխատանքային իրավունքի սուբյեկտ
20. Աշխատողների և գործատուների ներկայացուցչական մարմինները որպես աշխատանքային իրավունքի սուբյեկտ
21. Պետությունը որպես աշխատանքային իրավունքի սուբյեկտ
22. Ժամկետների հասկացությունը և տեսակները
23. Ժամկետների հաշվառելու կարգը
24. Հայցային վաղեմության, մարման և դատավարական ժամկետները
25. Աշխատանքային իրավունքի իրականացումը
26. Աշխատանքային պաշտպանությունը
27. Աշխատանքային պայմանագրի բովանդակությունը և պայմանագրի կնքումը
28. Աշխատանքային պայմանագրի տեսակները
29. Աշխատաժամանակի հասկացությունը և տեսակները
30. Հանգստի ժամանակի և տեսակները
31. Աշխատաժամանակի տևողությունը
32. Աշխատավարձի չափը որոշելը և փոփոխելը
33. Աշխատավարձի վճարման կարգը և ժամկետները, չվճարված կամ ժամկետանց վճարման համար պատասխանատվությունը
34. Աշխատանքի կարգապահության հասկացությունը, բովանդակությունը և ամրապնդման մեթոդները:
35. Ծառայողների իրավունքները և պարտականությունները
36. Կարգապահական զանցանքները և դրանց տեսակները
37. Կարգապահական ներգործության միջոցները
38. Ներքին կարգուկանոնի հասկացությունը
39. Վնասի հատուցման կարգը
40. Կարգավորման առարկան
41. Աշխատողների անվտանգությունը
42. Աշխատողների առողջության ապահովումը աշխատավայրում
43. Կոլեկտիվ աշխատանքային վեճեր

44. Գործադուլ
45. Աշխատանքային վեճեր

